ՏԱՐԻ Ե. ԶՈՐԵՔՇԱԲԹԻ 24 ՅՈՒԼԻՍ 1902 ԹԻՒ 436

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ,

Պուլկարիոյ համար
տարեկան 12 Ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »

Եվրոպայի համար
Տարեկան 3 տր.
Վեցամսեայ 1.50 »

Դանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ. երեքից ավելի անգամներու համար 20 Օ/0 զեղչ կրելայ։

Վարձքի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկել Խմբագրութեանս հասցեին։

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
« Charjoum»
Varna (Bulgarie)

—o—

Արտասահմանի համար ձեռքի
)(20 ՍԱՆԹԻՄ)(

Պուլկարիոյ համար ձեռքի
≍ 15 ՍԱՆԹԻՄ ≍

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱԳՈՒՄՍԻՆ ԲԷՌՆՈՒՄ

(Շար. նախորդ թիւեն եւ վերջ)

Հայ լրագիրներին ոչ միայն խստիւ արգիլված է արձագանք տալ երկիրը ճնշող սարսափներին դէմ եղած բողոքներին, այլ և սովորական քուրդ աւազակների հարստահարութեանց հանդէպ պէտք է լռեն։

Մեծ կոտորածների ժամանակ երբ ամբողջ աշխարհը զարզանքից դողումէր, հայ մամուլը բռնադատված էր լռել։ «Հայ խռովարարները խռովութիւններ յարուցանելով, փատիշահի զօրքը ստիպեցին կարգը վերահաստատելու համար»—ահա այս ձեւով էր հայ թերթերի մէջ արձանագրվում 300,000 հայերի, վեհապետի հրամանով, տեղի ունեցած մորթումը, մարդկային պատմութեան այդ ամենամեծ չարիքը։

Այն միջոցին երբ արեան գետեր էին վազում ամբողջ Հայաստանի մէջ, այս դժբաղդ երկրի լրագիրները այսպիսի պաշտօնական տեղեկութիւններ էին ստանում հրատարակելու համար. «Նորին վեհափառութեան շնորհիւ կարգը և խաղաղութիւնը թագաւորում են կայսրութեան մէջ»։

Մեծաքանակ կոտորածներին հետեւեց դանդաղ ջնջման փուլը։ Հիմա Հայաստանը անանուն գազանութիւնների մի թատեր է։ Բաշիբոզուկների և քրդերի վայրենի ցոլիրները բացարձակ ազատութիւն են տուել իրենց կատաղի բնազդներին, երկրի մի ծայրից միւսը կողոպտում, առեւանգում և սպանում են. ու այդ ամենի մասին դուք մի բառ չէք կարող կարդալ հայ թերթերում։

Կացութիւնը խկապէս սրտաճմլիկ է։

Պարոններ,

Ցասը տարիէ ի վեր Հայաստանի մէջ հանդիսադրված այս սարսափելի դրութիւնը ձեզ անյայտ չէ. և անկարելի է որ դուք անտարբեր մնաք։ Խնդիրը վերաբերում է երեք միլիոնից կազմված մի հին ժողովրդի մահուան ու կեանքին, որը արեւմտեան քաղաքակրթութիւնը մտցնում է Ասիական մութ անկիւնները։

Այս ժողովուրդը իր ամենասարսափելի տագնապի միջոցին ի զուր դիմեց քաղաքակրթված մարդկութեան։ Դաւադրական մի լռութիւն էր կազմակերպված հայկական «սարսափների» շուրջը։

Մամուլը լռեց. Մամուլը՝ որը պարտաւոր էր հասարակութեան տեղեկացնել թուրք կառավարութեան գործ դրած հրէշային ոճիրները. նա ոչ միայն լռեց. այլ և յանդիմական խօսքեր ուղղեց մի ժողովրդի, որը իր դերազանց յուսահատութեան մէջ երբեմն ըմբոստանում էր միջազգային դաշնագրութիւններով սրբագործված իր տարրական իրաւունքները պաշտպանելու համար։

Նոյն իսկ—այս մի անջնջելի նախատինք պէտք է մնայ քաղաքակրթութեան համար—մարդասպան Աբդիւլ Համիտը առանց դժուարութեան կարողացաւ գնել եւրոպական շատ թերթերի լռութիւնը։

Մեզ համար տաժանելի է, պարոններ, վերյիշել այդ տխրեցուցիչ յիշատակները և հաստատել մարդկային խղճի այդ մթնացումը, խաւարումը։

Դուք, մամուլի ներկայացուցիչներ, արդեօք հանրութեամբ ազգ. բողոք կազմակերպելու ամենալաւ ժամանակը չէ՞ք համարում. Սուլթանի ոճիրները մարդկութեան յայտնելու և պետութիւններին յիշեցնելու համար իրենց Հայաստանին տուած խոստումները և ստիպելու եռանդուն կերպով միջամտել, որը միայն կարող է վերջ դնել մարտիրոս ժողովրդի տանջանքներին։

Մենք յոյս ունենք որ բոլոր երկրների անկախ մամուլը, առանց կարծիքների խարութեան, կը շարունակէ պաշտպանել հայկական դատը. որը ամենից առաջ մարդկային խնդիր է, և ալակցելով հայկական ազատագրումին, պատճառ կը դառնայ մեր երկրում ազատ և հզօր մամուլի ստեղծումին. որի միսիան կը լինի ամբողջ ներքին Ասիայի մէջ արեւմտեան դաղափարների տարածումը։

Այս մտքով է. պարոններ, որ մենք դիմում ենք ձեզ, խնդրելով մի որոշում տալ, որը ամբողջ աշխարհի մամուլին պարտաւորեցնէ կանոնաւորապէս պաշտպանել հայկական դատը—որ հանրամարդկային և քաղաքակրթական մի դատ է։

Եւրոպայի Հայ Ուս. Միութ. կոմիտէ
Ժենիվ յուլիս 1902

ԿՈՎԿԱՍԷՆ

Գաղթականութեան հարցը այստեղ սուր կերպարանք առած է։ Ռուս կառավարութիւնը ամեն տեսակ միջոցներ իրեն զէնք ըրած կը հարուածէ ահագին թուով հայ գաղթականութիւնը, առարկելով թէ կամ հպատակեցէք եւ կամ թէ ոտք ու ձեռքերնիդ կապած թիւրք կառավարութեան կը յանձնեմ։

Երկու ամիսէ ի վեր է որ տեղւոյս ոստիկանական բանտը հայերով լեցուն է, ամեն օր 50է աւելի հայեր կը բռնեն կը չարչարեն, կը նեղեն ու կոպառնան. անոնց ձգելով ուրիշներ կը բռնեն։

Այդ բռնապետական կառավարութիւնը, անտէր ու անճար հայ գաղթականին այդ եւս շատ տեսնելով, գազան թիւրքին պակաս ձգածը ինքն կը լրացնէ։ 40–50000 ահագին թուով գաղթականութեան հետքն իսկ ջնջելու, հայոց եւ հայկական հարցին մեծ հարուած մը եւս տալու նպատակաւ։

Լիբիոթեան մէջ այնքան առաջ գացած է գաղթականներուս նկատմամբ. որ առանց խղճահարութեան ինքն իրեն պայմաններ մէջ տեղ բերելով, ամբողջ 20 տարի հպատակական իրաւունքներէ կը զրկէ, եւ զբուած օրէն սկսեալ զինուոր տալու կառաջարկէ, երկրի շահերն պաշտպանելու համար. իսկ հարկեր ըսես, բացի հողային տուրքէն, իբրեւ հրապատակ եւ տեղացի՝ ինչ որ կառավարութիւն պահանջէ պէտք է վճարել։

Իսկ հայ գաղթականութիւնը ի՞նչ պէս պիտի ապրի առանց հողի ու կալուածի, ուրկի՞ց պիտի շահի ու տայ եւ ի՞նչ սրտով հպատակութիւն ընդունելով հազար եւ մէկ վիշտով ու ցաւով իր մեծցուցած զաւակն օտարի շահեր պաշտպանելու համար զինուորագրութեան ղրկէ ռուսական հեռաւոր անկիւններէն միուն մէջ. սուրինի ու գնդակի մը զոհ տալու այն պիսի կառավարութեան մը համար, որ վեհանձնութիւն, գութ ու խիղճ ըսուած բաներ չունի։

Ահա հարց մըն է, որ ամեն մէկ զգայուն հայու սրտին կը մխուի, ուանել կացութեան կը մտանէ. թէ ի՞նչ ընել պէտք է, այդտեսակ ազգաջինջ ծրագրի մը հանդէպ։

Ռուսիոյ ամեն անկիւններ, ուր որ հայ գաղթական կը գտնուի, գիտցան դիմադրել գաղանային ազգաջինջ ծրագրի իրագործման, բացի Ղարսի ու Երեւանի նահանգներէն, եւ որոց պատճառն ալ Երեւանի նահանգի մէջ վանեցին, իսկ Ղարսի շրջակայք կարնեցին գարձաւ իր թուլամարթութեամբ։

Նախ ստոր ու ազատ միջոցներ իրենց զէնք ընտրելով, բողոքագրով մը Ղարսի նահանգապետի կը դիմեն առարկելով թէ՝ «մենք շատ եւ շատ ուրախ ենք որ ողորմած Ռուսիոյ կայսրը զմեզ իր հպատակութեան կը հրաւիրէ։ Բայց աւա՛ղ որ կը վախնանք այդ քայլ առնելու, անոր համար որ, եթէ մենք այդ քայլը առնելու ըլլանք, հայ յեղափոխականները կըսպառնան զմեզ սուրէ անցունելու։ Ահա մեր չը գրուելու ու մինչեւ այսօրս ընդդիմանալու պատճառը, որ ձեր առաջ կը դնենք. ու ձերդ ուշադրութիւնը կը հրաւիրենք»։

Այս եւ այս տեսակ շատ մը ազատ ու ճիվաղային զրպարտութիւններով իրենց շահերն պաշտպանող ու ապագային անել կացութենէն զերծ պահող իրենց եղբարց կը մատնեն, այնպիսի կառավարութեան մը, որ շատոնց ի վեր էր կրսպասէր մեր բերանով զմեզ դատապարտելու։

Եւ այդ մատնութեան պատճառաւ երեք չորս երիտասարդներ, կառավարութիւնը ձերբակալելով աքսորեց ուրիշ տեղեր. ու միւս կողմէն ալ ոստիկաններ հանեց հայ գիւղեր հայ յեղափոխականներ բռնելու եւ աքսորելու համար։

Այսօր Ղարսը իր գաւառներով անել կացութեան է մատնուած. եր-

կու հայեր կակնածին մէկզմէկու քով գալու խորհրդակցելու համար։ Լըռտեսներու թիւը չափ անցած է, եւ որոց մէջը հայը առաջին տեղ կը բռնէ, ժանգոտ մնտալ մը ստանալու դիտումով։

Կարնեցիները այդ աղտոտ ու բռտոր միջոցին գիժելէ յետոյ, առանց բացառութեան ուրախութեամբ փոլիցան գիժելով հպատակութիւն կընդունին, անոնց օրինակին յակամայից պիթլիսցին ու վանեցին հետեւելով կը գրուին, ի բաց առեալ մշեցին, որ մինչեւ այսօր կընդդիմանայ այդ կորստաբեր քայլն առնելուն նախատեսմար համարելով իրեն թուրքի սուրին ու սուին, քան թէ ռուսական հպատակութիւնը, որ կըսպառնայ իր գոյութիւն ընդ միշտ ջնջելուն։

Եւ այդ պատճառաւ ալ, որքան որ փոլիցյան սարուին, կարճ ու կտրուկ պատասխաններ տալով ճանապարհ կը պահանջեն Ռուսիայէն դուրս գալու, իրենց ուզած տեղերն անցնելու համար։

Ատոր փոխադարձ ամեն ժամանակ «նգոհացուցիչ պատասխաններ կըստանան թէ՝ առանց անցագրի մէկ մը իսկ անկարելի է երկրէն դուրս գալ, իրենց փափաքած տեղերն անցնելու համար. այլ ինքն կառավարութիւնը՝ ոստիկանական հսկողութեամբ Թուրքիոյ պիտի յանձնէ իբրեւ ըմբոստներ։

Ահա Ղարսի կառավարութեան բռնած ընթացքը դէպի հայ գաղթականները. ու ատոր հանդէպ, գաղթականներու աղտոտ ու ազգադաւ վարմունքը, որ Թուքի ու մուրի արժանի է։

Անցորդ մը

2 յուլիս 1902
Ղարս

ԴԷՍԻՑ ԴԷՆԻՑ

Անշուշտ «Շարժումի» ընթերցողները չը մոռցան անցեալ թիւին մէջ տպուած լուրը—«Թուրք կառավարութիւնը որոշեր է մարտկոցներ շինել Ռուսիոյ սահմանագլխին մօտերը—որպէսզի այլեւս հայ հրոսախմբերը չը կարենան Կովկասէն Թուրքիա անցնիլ»։

Սուլթանը լօրտ Քիչներէն օրինակ առեր է. բայց մոռցեր է որ Թուրքիա Քիչնէր չունի, և ամենէն մեծը, Թուրքիոյ գանձարանին մէջ մուկերը կը պարեն, ու եթէ գանձարանին մէջ պատահմամբ ստակ ալ գտնուի, մարտկոցները շինողները պիտի գողնան շինութեան համար յատկացուած դրամը։

Սուլթան պու, եափար....

Լրագիրները կը հաղորդեն որ Մակեդոնիոյ համար գօնֆէրանս մը տեղի պիտի ունենայ։ Սուլթանը նախապէս ինք ուզեր է այդ նպատակով յանձնախումբ մը կազմել, եւ արդէն կազմած է եղեր, բայց մեծ պետութիւնները չեն համաձայնած և որոշած են որ, նախ քան այդ յանձնախումբը կազմելը, գօնֆէրանս մը տեղի ունենայ։

Այդ գօնֆէրանսներուն վրայ մենք հաւատք չունինք. բայց երանի թէ տեղի ունենայ ու Մակեդոնացիները ազատին իրենց դժոխային կացութենէն։ Մենք չենք նախանձիր, բայց մեր յեղափոխականները ի՞նչ պիտի ընեն այդ առթին։ Լո՞ւռ պիտի մընան, թէ քայլ մը պիտի ընեն, գօնֆէրանս կազմողներուն հասկցնելու համար թէ հայկական խնդիր մըն ալ կայ լուծուելիք. ու ան պիտի լուծուի, ինպաստ Հայաստանի, ինչ գնով ալ որ ըլլայ։

*
* *

Պրիւքսէլի գօնկրէն վերջացաւ և այն տեղ շատ մը համակրական խօսքեր բռուեցան հայերու նըկատմամբ. լոկ խօսքեր։ Այդ գօնկրէին չէր մասնակցեր մարդ մը որ կարենար ըսել—հոգ մի ընէք, վաղն անմիջապէս իմ զօրքերս ու թնդանօթներս պիտի ղրկեմ Թուրքիա—Սուլթանի ճիրաններէն Հայաստանը ազատելու համար. այսու ամենայնիւ գօնկրէի մէջ արտասանուած չոր խօսքերն ալ թեւթօններուն ջիղերուն դպած է։ Սուլթանի եղբայր Վիլհէլմին գարշապարը լիզող թեւթօն մամուլը ատ չոր խօսքերն ալ շատ կը տեսնայ հայերուս համար և կըսէ «հայերուն վիճակը Բրօ Արմենիայի ներկայացածին չափ ալ գէշ չէ. գօնկրէին որոշումը եթէ իրագործուի, հայերուն տեղական ինքնավարութիւն տրուի, նորէն հայերը օգուտ մը չը պիտի ունենան, որովհետեւ ան ատեն քուրտերը աւելի ազատօրէն պիտի հայերը կոտորեն»։

Աղտոտ վեհապետի մը աղտոտ ու չէրչի հպատակներէն ատկէ ալ աւելի բան մը սպասել չէր կարելի։

Մեր գերմանայի բարեկամները միշ կը գրեն որ գերմանական մամուլը լիքն է սուտ ու սխալ տեղեկութիւններով հայերու մասին։ Զարմանալու ի՞նչ կայ. եթէ տեղեկութիւններ հաւաքողները Լէպսիուս եւ իր նման չար լաթան պատուելիներն են, որոնք Ճանկիւլներէն անգամ տեղեկութիւններ կառնեն, ու Ճանկիւլեանը կը ներկայացնեն հայ յեղափոխութեան մարմնացումը, ալ ուրկէ՞ պիտի ստացուին ճիշդ տեղեկութիւններ։ Հայ յեղափոխութիւնը, հայ կոտորածները, հայ որբերը շահագործման նիւթ դարձան Լէպսիուսներու եւ անոնց ձեռքը գործիք եղող հայ քարոզիչ պատուելիներու ձեռքը և ամենէն շատ շահագործողները եղան գերման քարոզիչները. ճիշդ իրենց կայսերը դրամասիրական ընթացքին հետեւելով,

ԿէՏ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Պուրկազ 20 յուլիս 1902

Բաւական ժամանակ կըլլայ որ, քաղաքիս մասին ո և է մի տեղեկութիւն չէ հաղորդուած «Շարժում»ին։ Թղթակցութիւններու ընդհատումը կարծեցնել չի տայ թէ ամեն ինչ կարգադրուած է և Պուրկազի մէջ հանդարտութիւնն ու խաղաղութիւնը կը տիրեն։ Ընդհակառակը, երկու ամիսէ ի վեր վերջին աստիճանի յուզեալ և լարուած վիճակ մը ունին տեղւոյս ազգային գործերը, և որու սկզբնապատճառը, ցաւ է ըսել թէ՝ այն ինքնակոչ և չահասէր սեւազգեստ պաշտօնեաներն են, որք իբր թէ ընտրուած են ժողովուրդը հովուելու և անոնց մէջ սէր ու միութիւն քարոզելու, և որք մարդասիրութեան ու եղբայրասիրութեան համար ինքզինքը զոհող մեծ վարդապետին խաչն՝ իբր թէ առած են իրենց ուսին վրայ և բնաբան ընտրած իրենց «հովիւ քաջ, հովիւ քա՛ջ զանձն դնէ ի վերայ ոչխարաց»։ այս տարբերութեամբ միայն որ, փոխանակ իրենց անձը իրենց ոչխարներուն համար զոհելու, ամեն տեսակ սինլքորութիւններ յանձն առած են իրենց կաշին պահպանելու. և իրենց սին յագուրդ տալու համար չեն դադրիր ժողովրդեան մէջ երկպառակութեան և ատելութեան սերմներ ցանել։

Աւելորդ է հոս ծանրանալ տէր Գարեգինի կղերականութեան անվայել և գայթակղեցուցիչ արարքի մասին։ Կը բաւէ միայն ըսել թէ Ֆէրքիի կատարելագործուած տիպարը եղած է, և գառնուկի զգեստ հագած՝ անլուր չահատակութիւններ գործած է, և իր քահանայական լայն քղանցքները ուրիշ բանի չեն ծառայած, բայց եթէ ոչ իրենց տակ ծածկելու զազրելի սխրագործութեանց երկար շարք մը։ Եւ չի կրնալով իր վրայ ծանրացող յանցանքներէն արդարանալ, կամացուկ մը փախած է քաղաքէս դէպի Պարսկաստան, ուր տեղի «կեանքի պայմանները» աւելի կը յարմարին իր ճաշակին։ Նորա մեկնումէն ետք յանկարծաւոր տեղս կը հասնի հանրածանօթ Սիմոնական Գէորգ քահանան, որ առանց հրաւէրի եկեղեցի կը մտնէ և կը պատարագէ, ու միութեան, սիրոյ, համերաշխութեան քօղին տակ ծածկուած՝ կծու, նախատական և մի քանի անձերու նկատմամբ ակնարկալից քարոզ մը կը խօսի։ Աստ չի բաւականանալով, հետեւեալ օրը իր շուրջը կը հաւաքէ Պուրկազի հանրածանօթ ինկածներու երրորդութիւնը և անոնց արբանեակները, և գաղտնի խորհրդակցութիւն մը կատարելով կսկսի որճարաններու անկիւններէն թաղական խորհրդոյ անդամներուն և այլ պատուաւոր ազգայիններու հասցէի լուտանքներ ուղղել, և պղտորել ժողովրդի միտքը, որպէսզի պղտոր ջուրի մէջ կարենայ ձուկ որսալ։ Իրեն, հարկ եղած պաշտօնական ազդ. թէեւ կը լինի, բայց փոխանակ մեղմացնելու իր ընթացքը, աւելի կը կատղի և կը դիմէ այն տեսակ ստոր միջոցներու, որք ո՛չ միայն կղերականի մը անվայել են, այլ և ամենապարզ աշխարհականի մը իսկ աններելի։ Ուզած է բռնութեամբ եկեղեցի մտնել, բայց ժողովրդեան մեծամասնութիւնը ազդարարած է թաղական խորհրդոյ թէ՝ եթէ զինքը սեղանին վրայ, բանի վար պիտի առնեն և արիւնահեղութիւն տեղի պիտի ունենայ։ Ուրախալի է որ թաղական խորհուրդը կը լսէ ժողովրդեան արդար բողոքը և հսպառ կարգիլէ քահանային կրօնական ո և է արարողութիւն կատարել։

*
* *

Այս խռովութիւններու միջոցին յանկարծ կը մեռնի տեղւոյս ազգային ուսուցիչը՝ Սարգիս Սարգիսեան 18ամեայ պատանին։ Ժողովրդին մէջ իրարանցում մը կը սկսի և ամեն ոք կը փութայ թաղական խորհրդոյ զեկուցանելու թէ՝ տէր Գէորգը պէտք չէ թաղման հանդէսը կատարէ։ Թաղական խորհուրդը ի հարկէ ստիպեալ կը հրաւիրէ Սլիվէնի տէր Վաղինակ քահանան։

Պուրկազի հայ գաղութը մեծ կորուստ մը ունեցաւ յանձին Սարգիսեանի. Պուրկազի հայութեան ամեն դասակարգը առանց բացառութեան լացաւ անոր վաղահաս մահը։

Պոլսոյ 96ի ցաւալի դէպքերուն առթիւ արտասահման ապաստանող համեստ ընտանիքի մը զաւակը, քիչ մը ատեն կը մնայ Պուրկազի ազգ. վարժարանը և ինքնօգնութեամբ զարգանալով ու իր համեստ և հեզ բնաւորութեամբ ամենուն համակրանք արժանանալով, կը հրաւիրուի ազգային վարժարանին մէջ ուսուցչական դասատուութեան պաշտօնին, և զոր երեք տարի վարեց կատարեալ անձնուիրութեամբ և պարտաճանաչութեամբ։

Յուղարկաւորութեան հանդէսը արտակարգ շքեղութեամբ տեղի ունեցաւ. Սլիվէնի Տէր Վաղինակ քահանան կատարեց թաղման արարողութիւնը։ Խուռն բազմութիւն մը ներկայ էր տխուր հանդէսին։ Վարժարանի երկսեռ ուսանողք արտասուալից

աչօք չըմապատած էին վաղամեռիկ ննջեցեալին դագաղը, որու վրայ զետեղուած էին երկու մեծադիր պսակներ՝ մին աշակերտաց, իսկ միւսը Հոգաբարձութեան եւ Թաղականութեան կողմանէ։

Արժ. Տէր Վաղինակ քահանան հակիրճ դամբանականով մը պարզեց հանգուցեալին բարեմասնութիւնները և ծանրացաւ անոր ուսուցչական ասպարէզին մէջ երեք տարուան ցոյց տուած արգիւնաւոր գործունէութեան մասին։ Ցոյց տուաւ այսպիսի պատանիի մը կանխահաս մահուան՝ հանրութեան համար զգալի կորուստ մը ըլլալը, մանաւանդ ներկայ ազգային մեծ ճգնաժամին մէջ, յորում ամեն առենէ աւելի պէտք են գաղափարական և անձնուէր մշակներ։

Յետոյ խօսեցան նաեւ ուրիշներ, որք երեւան հանեցին հանգուցելոյն բարելաւութիւնները և գրուատիք ըրին անոր խղճմտօք գործունէութիւնը։

ԱՅԲ—ՍԷ

Յ. Գ.—Մինչեւ այժմ դեռ փակ կը մնայ եկեղեցին և արարողութիւններ չեն կատարուիր։ Մի շաբաթ առաջ մեռաւ տեղւոյս ազգայիններէն մէկուն մանկիկը, զոր պոլկար քահանան թաղեց։

Նոյն

ԲԱՐԲԱՋՈՂ ԵՌԱՍՏՂԻՆ

Վառնայի ծանօթ աղբակոյտ թերթը իր դերին մէջ է. Նորէն փառաւորապէս հիւրնկալած է քաղքիս կարգ մը աղտոտներու մէկ լրբենի արտադրութիւնը որ այս անգամ իր տեսակին մէջ դերազանցօրէն պժգալի է. Խեղճերը ամեն միջոց, ամեն վէնք սպառած են այլ եւս և իբրեւ ամենավերջին մարդիկ մատնութեան և զրպարտութեան կը դիմեն Դաշնակցութեան, Հայ մամուլի վարժարանի և անհատներու դէմ կռուելու համար։ Իրենց փոքր ցաւը յայտնի է. կուզեն կցել, կուզեն նոյնացնել կատարուող հանգանակութիւնը անձերու և հիմնարկութիւններու հետ որոնք առնչութիւն մը չունին և չեն ալ կրնար ունենալ այդ խնդրին հետ.

Ողորմելի մարդիկ. իրենց անզօրութեան մէջ յիմարացած չը գիտեն թէ ինչ կրնեն։ Հայ մամուլը դպրոցը այն լոյսն է, զոր մութին սեւութեան վարժուած այդ արարածները աչքերը չեն կրնար տանել. գիշերային խաւարի մէջ ապրող այդ սեւ հոգիները լոյսին առջեւ պատէ պատ կիյնան, հոս հոն կը զարնուին և առով միայն իրենց կուրութիւնը ողորմելիութիւնը կ'ապացուցանեն։

Արդարեւ եռասողի սակ ծածկուող և հայ երիտասարդութեան անունով խօսող (որ հայ երիտասարդութիւն ?) այդ ողորմելի արարածը անհատներ մրոտելու, հաստատութեանց վնասելու իր զաղիր կիրքէն մղեցնած՝ ամենաստոր դեր մը ստանձնած է։ Դէպք մը կը պատմէ, որուն ճշմարտութիւնը եթէ մարդ ընդունի այն ժամանակ ստիպուած պիտի ըլլայ հաստատելու թէ՝ անմեղ անձնաւորութեանց անունը տալու և ուրիշ վաճառականի մըն ալ անունը հրապարակելու սպառնալը պարզապէս ՄԱՏՆՈՒԹԻՒՆ է. իսկ եթէ համարինք թէ ճիշդ չէ դէպքը, այն ժամանակ ըրածը կատարեալ զրպարտութիւն է, երկու պարագային տակ ալ եռասողը իր համախոհներով միասին կրնայ պարծենալ և ինքզինքը հայ երիտասարդ կոչել ուզածին չափ. բոլոր ուղղամիտ ընթերցողներու հետ ես զինքը պիտի համարեմ իբրեւ ամենագծուծ և ամենավատ արարած մը։

Թող քաջասիրտ Եռասողը իր բուն անունով հրապարակ գայ որպէսզի իմ անձիս դէմ ըրած զրպարտութեանց հաշիւը կարենամ կարգադրել իր հետ։

Յ. Թահմիզեան

Փ. Պօլիս 18 յուլիս 1902

ՊՐԱՒԼԻ ՏԷՐ ՍՏԵՓԱՆԻՆ

Խոստումիս համեմատ Ռումանահայոց վրայ մանրազնին հետազօտութիւն մը հրապարակ հանելու համար ամսոյս 13ին սկսայ ճամբորդել բոլոր հայաբնակ քաղաքները անձամբ եւ հազիւ Թրկու—Օգնա հասած՝ նամակ մը ստացայ բարեկամէս, որով ի միջի այլոց ինձ կը հաղորդէ սա չակերտեալ տողերը.—«Իրաւունք լրագրի վերջին թիւին մէջ Պրաւլի քահանային կողմէն պարսաւագիր մը հրատարակուած է ձեզ դէմ, իբր թէ դուք ասկէ 3–4 տարիներ առաջ նոյն քահանային դիմած, 50 ֆրանքով ձայնաւոր ըլլալ աղաչած կամ վաճառականի մը քով գործ մը գտնել խնդրած էք զանազան խոստումներով, բայց չը յաջողելով ըսպառնացած էք այդ քահանան պաշտօնանկ ընել տալ՝ պարզապէս վրէժ լուծելու համար. ինչպէս որ վերջին անգամ իր դէմ գրածնիդ ալ այդ պատճառին արդիւնքն է եղեր եւ այլն եւայլն»։ Այս է բարեկամիս գրածը։

Ես «Իրաւունք» կոչուած սրտխառնուքը չառնելու բարեբախտութիւն ունենալով եւ Թրկու—Օգնոյի մէջ ալ զայդ քուրջ գտնել անկարելի ըլլալով, առ այժմ կստիպուիմ միայն պատասխանել տէր Ստեփան քահանային մուրացածոյ ու մոլական պաշտպանողականին՝ ինձ տրուած վերի տողերուն պարունակութեան համեմատ։ Աւելի ընդարձակ խօսել անձամբ կատարելիք քննութենէս անմիջապէս ետքը վերապահելով.

Ուրեմն, առաջին.—այո, չորս տարիներ առաջ Պրաւլա հանդիպած եմ նոյն իսկ իր նամակով ու խնդրանքովը իբրեւ ձայնաւոր ուսուցիչ եւ դպրոց մը բանալու նպատակով։ Երբ Ռուսճուքէն Պրաւլա հասայ, հասկըցայ որ տեղւոյն թաղականը քահանային ամսականէն զեղչ մը ընել ուզած է դպրոցին յաջողութեան համար. ասոր վրայ մեր օրհնեալ տէր հայրը չըմորած ու կատղած, հասնելուս երկրորդ օրը յայտարարեց թէ, «որչափ որ գրած է ինք դասատուի մը համար, բայց քանի մը աղաներ չեն ընդունիր իր առաջարկը եւն եւն»։ Իսկ ես անծանօթ իր վատ նկարագրին, ստիպուեցայ անուշութեամբ վարուիլ, գուցէ խոստումներն ալ ըրած եմ թէ իմ գործիս եւ թէ մանաւանդ կրթարանի մը բացուելուն համար, մտածելով թէ այդ տեսակ անդամալուծի մը համոզելու ուրիշ կերպ չը կար։ Ամեն ջանք ապարդիւն եղան, քանի որ իր չահին դպչելու պահանջը կար մէջ տեղ։ Այս պարագային էր որ իր անվայել ընթացքը ձաղկելու համար սպառնալիքներ ըրած եմ, առանց սակայն բան մը ընելու։

Երկրորդ, կարելի է վաճառականի մը քով մտնելու համար իր միջնորդութիւնը խնդրած եմ. չեմ կարծեր որ գործ գտնել ջանալը յանցանք մը ըլլայ, բայց չեմ մեղադրեր այդ տէր հայրը, վասն զի երբէք ճակտի քրտինքով հաց ուտել չէ սորված։

Զարմանալի է, աւելի մարդ կը ծիծաղի ու կարգահատի տէր Ստեփանի կարճ գատողութեան վրայ, նկատելով մանաւանդ թէ՝ եթէ ինձ դէմ տարիներ առաջ փորցաւ մը ունեցած է, ինչու մինչեւ հիմա պապանձած էր, մինչդեռ իմ իր դէմ գրածս ալ վեց ամիսներ առաջ էր։ Ի՛հ, չպանուիր. քանի մեր տէր հայրը երկտող նամակ մը գրելու կարողութիւն չունի. կերեւի թէ այս օրեր խոլամանիկ մէկը վարպետ խաղ մը խաղցած է իր գլխին՝ գրգելով զինքը եւ իրեն չարախօսելով այդ հրաշալի տողերը, բայց դժբաղդաբար սալ խեղճ մարդը չարդարանալէ զատ՝ լաւ մը դիմակազերծ ըլլալու կրակին մէջ ալ նետուեցաւ։ Ուրախ պիտի ըլլայի, եթէ ինքզինքը կ'ուրենար պաշտել քննադատութեան խարտակիչ ու խիստ բոլէն։

Եւ որպէս զի տէր հայրը լաւ մը հասկնայ թէ, ես անձնական նկատումի համար չեմ հարուածած զինքը, ինչպէս նաեւ բոլոր միւս քահանաները, կը փութամ ներփակեալ ղրկել «Շարժում»ի պատ. խմբագրութեան Պրաւլի ամենապատուաւոր եւ նոյն իսկ թաղականի մեծ. ատենապետին պաշտօնական նամակը, որուն մէջ տէր Ստեփանը «անուս. քծնող, փառասէր եւ բռնաւոր» յորջորջուած է. փափաքող կարող են անձամբ դիմել ու կարդալ զայն։ Արդէն իմ իր դէմ գրածս ալ այդչափ էր եւ ոչ թէ հին վրէժի մը արդիւնքը։ Ամօ՛թ է քահանայ էք, մի ստէք, ոչնչութիւններով զձեզ մի պաշտպանէք, առով տգիտութիւննիդ, ազգամնաս ընթացքնիդ և գայթակղութիւննիդ չը ծածկուիր եւ չը պէտք է ալ ծածկուի, ալ հերիք է խաբէք միամիտները, ցը տեսութիւն։

Ս. Գոռայ

16 յուլիս
Թրկու—Օգնա

ԹՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԷՍՏ-ՕՒԷՍՏ գործակալութիւնն՝ երեք օր առաջ հետեւեալ թղթակցութիւնն ստացաւ Կ. Պոլիսէն, մենք անոր կարեւոր մասերը միայն առաջ կը բերենք։ Կ. ՊՈԼԻՍ 22 յուլիս.—Քանի մը օրերէ ի վեր Բերայի փողոցներուն մէջ բազմաթիւ լրտեսներ և ծպտեալ ոստիկաններ կը պտտին— մեր անցեալ թղթակցութեան մէջ կը տեսինք թէ լրտեսներու կարեւոր բանակ մ'ալ Բարիզի մէջ բոյն դրած է նորէն, որն այնպիսի փառաւոր քաջագործութիւններ կը կատարէ որոնցմէ անմահ Տոն Քիխոթը պիտի նախանձէր, անկասկած, եթէ այսօր ապրէր։—

Ես բացարձակապէս հաստատ աղբիւրէ մը կիմանամ թէ լրտեսներու և ոստիկաններու խռովութեան պատճառն է «կասկած» մը, ըստ որում «կը վախցուի» թէ երիտասարդ թիւրքերը ապստամբական շարժում մը պիտի կատարեն Կ. Պոլսոյ մէջ.—աշնան Զատկի՞ն։—

Միւս կողմանէ, ուրիշ իրարանցում մը կը տիրէ թուրք շրջաններու. և թրքաբնակ թաղերու մէջ, որովհետեւ լուր տարածուած է թէ Կ. Պոլսոյ մէջ հաստատուած է Մակեդոնա-Ալբանական կոմիտէի մի կարեւոր մասնաճիւղը, բան մը որ չափազանց կը վրդովեցնէ առհասարակ բոլոր թուրքերը, որոնք նախանձախնդիր են թուրք կայսրութեան ամբողջականութեան։ Թուրք խուժանն ալ զայրացած է այդ կոմիտէին դէմ, որովհետեւ նա «վերը Ալլահ, վարը փատիշահ» կը ճանչնայ։

Այազ-Փաշաի մէջ գտնուող՝ Ֆուատ փաշայի ապարանքը, ուր դեռ կապրի աքսորեալ փաշային գրեթէ ամբողջ ընտանիքը-խիստ հսկողութեան տակ է։ Այդ ընտանիքը սարսափ կ'ազդէ Սուլթանին։

Յունաց Յովակիմ պատրիարքը պաշտօնապէս ճանչցող «Պէրաթ»ը վերջապէս ելաւ և ղրկուեցաւ յունաց պատրիարքարանը. այդ հրովարտակին վրայ կը կարդացուի հետեւեալ նախադասութիւնը. «Մուճէպինճէ ամէլ օլունա» (բովանդակութեան համեմատ կատարուի) որ գրուած է բուն իսկ Սուլթանի ձեռքով, բան մը որ յաճախ չի պատահիր, որովհետեւ մինչ այս տեսակ թղթերը կը ստորագրէ Մեծ-վէզիրը՝ Սուլթանի հրամանին համեմատ և կը գրէ. «Տէրոջս Սուլթանի բարձանօք և հրամանով, թո՛ղ կատարուի բովանդակութեան համեմատ»։ Մեծ-վէզիրի ստորագրութեան բացակայութիւնը, և այդ պէրաթին վրայ Սուլթանի ստորագրութիւնը մեծ ազդեցութիւն գործեց *զանազան շրջաններու մէջ։ Պաշտօնական շրջաններու մէջ կըսեն թէ Յովակիմի խնդրոյն մէկ տարի ձգձգուելուն պատճառ եղեր է Մեծ-վէզիրը՝ Սաիտ փաշա, որ սաստիկ հակառակ է եղեր այդ յոյն կղերականին։ Դարձեալ պաշտօնական շրջաններու մէջ կըսեն թէ Մեծ-վէզիրը ստիպուած պէտք է հրաժարի իր պաշտօնէն քանի որ Սուլթանը հակառակ իր ընդդիմութեան Յովակիմի պատրիարքութիւնն ընդունեցաւ, ուստի և իր Մինիստրին վրայ անվստահութիւն ունեցաւ։ Եղելութիւնն այն է որ Մեծ-վէզիրը այժմ Բ. Դուռը չի գտնուիր։ Ոմանք կըսեն թէ հրաժարական տուեր է, ուրիշներ կը

կարծեն թէ գիւղ դնացեր է ապաքինելու համար...։ Եթէ իրաւ հրաժարականը տուած է Սայիտ, Ցովակիմը զայն տապալած պիտի լինի, որով այդ յոյն պատրիարքը առաջնակարգ դիւանագէտի մը խմորը ունեցած պիտի լինի։ Կըսեն թէ Սուլթանէն շատ սիրուած է այդ մարդը և անոր վստահութիւնը կը կրէ։

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ. «Քրֆու 23 յուլիս». — («Էսթ-Ուէսթ»ի յատուկ թղթակցէն)— Ամբողջ Ալբանիոյ վիճակը խիստ տագնապալից է, տեղացի պէկերը անխնայօրէն կը զարնեն, կը ջարդեն, կը թալանեն մասնաւորապէս տեղական թուրք ժողովուրդը և թրքական հաստատութիւններն ու կառավարութիւնը։ Եօթը հազարէն աւելի Ալբանիացիներ՝ լաւ զինուած կը շրջին Ալբանիոյ մէջ, թուրք իշխանութիւնը այլ եւս անկարող է ոևէ ազդեցութիւն գործել։ Ապահովութիւն ըսուած բանը բոլորովին վերցեր է Ալբանիայէն։ Պէտք է յիշել և մասնաւորապէս ի նկատի առնել և այն անհերքելի եղելութիւնը որ Աւստրիացի և Իտալացի յանձնաձիչներ շրջելով Այրանիոյ հիւսիսային կողմը, ժողովուրդը և ոգիները կը գրգռեն։ Արդէն ժամանակին ձեզ գրեցի Մոնթէնէկրօի սահմանագլխին վրայ պատահած պատերազմին մասին։ Ալբանիացիք Մալայբէկի հրամանատարութեան տակ, Մոնթէնէկրօցի զօրքերու հետ կռուեցան շարունակ երեք ժամ։ Մոնթէնէկրոցւոց կողմէն մեռաւ Սավա Տիմքոս անուն մի ենթասպայ և եօթը զինուոր, իսկ Ալբանացիք մէկ զոհ և երկու վիրաւոր ունեցան։ Ալբանիացիք մեռած Մոնթէնէկրօցի զինուորներու հրացանները և վրանին ունեցածներն առնելով փախան։ Մոնթէնէկրօի ինչպէս և թուրք կառավարութիւնը մեծամեծ գնդեր դրած են սահմանագլուխներու վրայ։

Մէլիք Ս. Դաւթեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍԻԱ

Ռուս կառավարութիւնը որոշած է Պապի քով ունեցած դեսպանական պաշտօնը ջնջել։ Պապը շատ դժգոհ մնացած է ռուս կառավարութեան այդ որոշումէն։

— Ռուսական մամուլը մեծ դառնութեամբ կը մատնանշէ որ Քօրէան հետզհետէ բոլորովին Անգլիոյ և Ճաբոնի ազդեցութեան տակ կիյնայ, իսկ Ռուսիոյ ազդեցութիւնը ընդհակառակը բոլորովին ոչնչացած է։ Այդ իրողութիւնը կը նկատուի իբրեւ Անգլօ—Ճաբոնական դաշնակցութեան հետեւանք։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Մակեդոնական համագումարին համար պատգամաւորներ կընտրուին. Սարաֆովիստներու և ներկայ Բ. կոմիտէի կուսակիցներուն միջեւ մեծ պայքար կայ։ Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ պուլկար կառավարութիւնը այժմս աւելի Սարաֆովի կողմն է. որովհետեւ Սարաֆովի կարծիքով այս տարի ապստամբութիւն չը պէտք է բարձրացնել։

— Ռուսական Սեւ ծովի նաւաբաժինը Վառնա եկած է, և մինչեւ ամսոյս 27ը պիտի մնայ մասնակցելու Վառնա քաղաքին ազատութեան տարեդարձի տօնին։

ՖՐԱՆՍԱ

Ընկերավարականները և արմատականները ուրախութեան ցոյցեր ըրեր են Բարիզի մէջ կրօնականներուն դպրոցները գոցուելու համար։

Դաւառներու մէջ կղերական դպրոցներուն գոցումը տեղի կունենայ առանց յուզումներու։

Երեսփոխան մը յայտարարած է որ ինք երեսփոխանական ժողովին պիտի առաջարկէ ջնջել պապի հետ ունեցած համաձայնագիրը. և յոյս ունի որ երեսփոխանական ժողովը պիտի ընդունի իր առաջարկը։

ԱՆԳԼԻԱ

Զրոյց կայ թէ թագադրութեան հանդէսէն անմիջապէս վերջը թագաւորը վերաբուժական երկրորդ գործողութեան պիտի ենթարկուի։

— Երեսփոխանական ժողովին մէջ Զէմպրլէն պօէրներուն վրայ խօսելով՝ համոզում յայտներ է թէ բարեկամաբար պիտի կենակցին Անգլիացի գաղթականներուն հետ և թէ անոնց հաւատարմութենէն կասկածելու պատճառ մը չկայ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Պարսիկ և անգլիական կառավարութեան միջեւ նոր դաշնագրութիւն մը կնքուած է որու հիման վրայ Պարսկաստանի հեռագրական կարեւոր պաշտօնեաներ անգլիացիներ պիտի նշանակուին միայն։

Այդ դաշնակցութեան շնորհիւ անգլիացիները շատ ուրիշ առաւելութիւններ եւս ձեռք կը բերեն, որով և ռուսական գերիշխանական ձգտումները ջուրը կիյնան բոլորովին։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

—o—

Մարզպետունի — ղրկեցէք, եթէ յարմար ըլլայ կը տպագրենք, իսկ եթէ ոչ ուրիշի կը յանձնենք իբրեւ գիրք տպագրելու։

Ս. Գոռայր։—Շտապեցէք ղրկել Ռումանահայերի մասին Ուսումնասիրութիւնը։

ԱՆՁՆԱՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

Ֆրանսայի նշանաւոր վեպասաններէն Ռընէ տը Բոն-Ժէի հեղինակութիւնը եղող, խիստ հետաքրքրաշարժ եւ բարոյալից վէպին

15րդ և 16րդ թերթերը

հրատարակուեցան։

Գիրքը չաբաթը երկու թերթ կը հրատարակուի եւ իւրաքանչիւր թերթը կը ծախուի 5 սանթիմի։ Ամբողջ գիրքը 24-25 թերթերէ պիտի բաղկանայ։

Վառնայի համար բաժնեգին 1 ֆր.։ Ուրիշ քաղաքներու եւ արտասահմանի համար 1.20։

Վառնայէ դուրս, Պուլկարիոյ եւ արտասահմանի համար հինգ թերթ մէկ ծրարով կը ղրկուին. փոստի ծախքը հրատակչին վրայէ։ Դիմել հետեւեալ հասցէին՝ **Imprimerie Orientale Onnik Parseghian, Varna.**

Դրամի փոխարէն նամակադրոշմ ալ կ'ընդունուի։

ԹԱՏՐՈՆ „ՊՕՐԻՍ“

Հաճի Բանաֆո
Ամառնային շրջան
«ՎԷՍԷԼՕ»
Հայ դերասանական խմբին
Վաղը հինգշաբթի գիշեր ժամը 9ին պիտի ներկայացուի՝

Ի ՆՊԱՍՏ

խմբիս երգչուհի եւ Պարուհիներ Օր. ՌՕԶԱԼԻ եւ Օր. ԲԱՐԱՍՔՕՃԻ

ԻՆՔՆԱՊԱՆ ՀԱՅՐ

կամ

ՊԱՀԱՆՋԿՈՏ ՍՊԱՍԱՒՈՐԸ

Թատերախաղ 5 արարուած

Պահանջկոտ սպասաւորի դերը պիտի կատարէ Պ. Ա. Պէնլեան.

ԾԻԾԵՌՆԱԿ

Հայերէն լեղուաւ պիտի երգէ
Օր. ՌՕԶԱԼԻՆ

* * *

ՕԱՏԱՆԱՑԻՆ ԿՏԷԿԸ

զաւեշտ 2 արար Պ. Ա. Պէնլեանէ կողմանէ

* * *

ԵՐԳ ԵՒ ՊԱՐԵՐԳ

Պ.Գ.Ցակոբեանի եւ Օր. Բոզաշիի կողմէ

* * *

ՊԱԼԷԴ

Օրիորդ Բարասֆոյի կողմանէ

* * *

Ցառաջիկային մեծաւ պատրաստութեամբ պիտի ներկայացուի համբաւաւոր Վերտիք հրկիրէն

ԱՅԻՏԱ

անուն ահռելի ողբերգութիւնը

ՄԱՐԻԺԱՆ

անուն բարոյալից թատերգութիւնը

ՓՈՐՁԻ ՏԱԿ ԴՐՈՒԱԾ Է

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—o—

«ԲԱԲԿԷՆ ՍԻԻՆԻ» ընթերցարանի մէջ կը ծախուի Ատոմ Եարճանեանի „Դիւցազնօրէն»ը ի Նպաստ Հայ Ուսանողական Միութեան։

Գինն է 1 լէֆ արծաթ։

Կը ծախուի նաեւ «Ղարիպի Ազատութեան Ճանապարհին»։

Գինն է 90 սանթիմ

Վառնա

ԱՆՈՒՇԱՒԱՆ

ՀՍՑԻ ՀՍՍԱՐ

կամ

ԱՂՋԿԱՆ ՄԸ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Վէպ մը իրական կեանքէ
Մամլոյ տակ

Այս վէպը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ զանազան պատկերներ. հրատարակութեան բանձնուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին բաժանորդներ հրատարակութեան դիւրութիւն ընծայուելու համար։

Բաժնեգինն է 1 ֆրանք. բոստի ծախքը հրատարակչին վրայ։

Տպագրութիւնը աւարտելուն գրքերը կը յանձնուին բաժանորդներուն։

Գոյանալիք հասոյթը ամբողջովին կը նուիրուի «Հայկական Կարմիր Խաչ»ի ընկերութեան։

Բաժանորդագրութեան համար դիմել հետեւեալ հասցէին։

Մուրաս Երանոսեան

(Պուլկարիա) ՎԱՌՆԱ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. „ՇԱՐԺՈՒՄ“

——

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատոմս, հասցէատոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւնները ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՑԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻՆ

ԵՒՐՈՊԱՑԻ ՀԱՑ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով

Իւնիսն տէ Զէդիւտիան Արմ.
լէօորոք ռիւ տը լէֆօլ տը Շիվի 2
Սուիս Ժընէվ
Կարգոդիր Ցանձնաժողով

Отговорникъ

Журадъ-Ераносянъ

Печатница К. Николовъ — Варна.